Դեսպան Առկին ներկա է գտնվել Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողությանը

Մարտի 11-ին՝ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժից 14 տարի անց, դեսպան Առկին ներկա է գտնվել Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերի ոգեկոչման արարողությանը Սպիտակ քաղաքում՝ 1988թ.-ի երկրաշարժի էպիկենտրոնում: Արարողությունն անցկացվել է տեղի կամավորների նախաձեռնությամբ 2012թ.-ին տեղադրված Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերին նվիրված խաչքարի դիմաց:

Բացի դեսպան Առկիից արարողությանը ներկա են գտնվել նաև ՀՀ ՆԳ նախարարի տեղակալ և ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության տնօրեն պարոն Ցուցուլյանը, Լոռու մարզպետի տեղակալ պարոն Ասրյանը, Լոռու մարզային փրկարարական վարչության անդամները, ինչպես նաև մի շարք քաղաքացիներ: Արարողության ընթացքում մասնակիցները ծաղիկներ են խոնարհել Արևելյան Ճապոնիայի, ինչպես նաև Սպիտակի երկրաշարժերի զոհերին նվիրված խաչքարերին՝ աղոթելով զոհերի համար:

Արարողության ընթացքում Լոռու մարզային փրկարարական վարչության պետ գնդապետ Սերոբ Գաբրիելյանին շնորհվել է Ճապոնիայի արտաքին գործերի նախարարի գովասանագիր: Գնդապետ Գաբրիելյանը JICA-ի ծրագրի միջոցով Ճապոնիայի աղետից տուժած շրջաններ այցելելուց հետո նախաձեռնել է դրամահավաք՝ Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժի զոհերին նվիրված հուշարձանի կառուցման համար, ինչը հաջողվում է Սպիտակի բնակիչների ներդրումների, ինչպես նաև իր անձնական միջոցների շնորհիվ: Գնդապետ Գաբրիելյանը պարգևատրվել է՝ ի նշան իր գործունեությամբ Ճապոնիայի և Հայաստանի միջև փոխըմբռնմանը խթանելուն:

Դեսպան Առկին աղոթում է զոհերի համար

Արևելյան Ճապոնիայի Մեծ երկրաշարժին նվիրված հուշարձանը

Դեսպան Առկիի ողջույնի խոսքը

Ճապոնիայի արտաքին գործերի նախարարի գովասանագրի հանձնումը գնդապետ Սերոբ Գաբրիելյանին